Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

372.21
Դ-98

«Նախադպրոցական դաստիարակությունը միջոցով դեպի նոր կենցաղ».

ՀԿԿ(բ)ԿԿ ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ԻՆՉ Է ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ

ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՅՆ

ՅՐԵՎԱՆԻ ՄԱՍՍԱԿԻՆ ՏՊԱՐԱՆ

1926

ԵՐԵՎԱՆ

30.502

4 APR 2013

D 120-1

Նախադպրոցական դաստիարակության
միջոցով դեպի նոր կենցաղ.

ՀԿԿ(բ)ԿԿ ԲԵՆՎԱՐՈՒՀՈՒ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

372.21
Գ-98
Ա6

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Մ. ԳՈՒՐԳԱՐՅԱՆ

ԻՆՉ Է ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ
ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՅՆ

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

1926 ՑԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
2· Հավելվածներ №№ 1—6 · · · · · · · · ·	1—13
1· Մանկական հրապարակ · · · · · · · · ·	14—21
3· Շրջաբերական զավլուսբաժիններին · · · ·	22—24
4· Կոչ հասարակական կազմակերպություններին ·	առանձին

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատեսչվար 433 բ· Պատվեր 2994 Տիրաժ 1000

1. «Գեղջկուհու և բանվորուհու ազատագրման, նրան հասարակական կյանքին մասնակից դարձնելու, գյուղում նոր կենցաղ ստեղծելու, գյուղացիության և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար խորհրդային շինարարության հերթական խնդիրներից մեկն է տարածել մանկական հիմնարկների լայն ցանցը գյուղում»։

(Համառուսակ. նախադպր. 3-րդ համագումարի բանաձևերից. 1924 թ. 15—21 հոկտեմբերի)

2. «Բանվորուհու և գեղջկուհու աշխատանքի թեթևացման և նրան հասարակական գործին մասնակից դարձնելու համար առաջնակարգ նշանակություն է ստանում նախադպր. հիմնարկների կազմակերպությունը (մսուրներ, հրապարակներ), որոնք հետզհետե մանկապարտեզների յեն վերածվելու»։

(Հայաստանի նախադպր. հիմնարկների աշխատավ. կոնֆերանսի բանաձև. § 2, 1925 թ. 2 օգոստոսի

Ո՞ր մայրը չի զգացել այն դժվարությունները, որ կապված է յերեխայի անհատական դաստիարակության հետ ընտանիքում. նույնիսկ գիտակից աշխատավորուհու, անգամ ուսուցչի յերեխան շատ հաճախ մեծանում է անխնամ ու առանց մանկավարժական հսկողության, չնայած այդ նույն ուսուցիչը տանում է տասնյակ յերեխաների դաստիարակության հոգսը։

Քանի փոքր է յերեխան, քանի շատ են կապված նրանցից ծնողները և ինչքան ցած է նրանց կուլտուրական մակարդակը, այնքան ավելի դժվարանում է դաստիարակության գործը, այնքան ավելի խնամազուրկ է յերեխան և այնքան ավելի անզոր է ընտանիքը ապահովել յերեխայի աճող օրգանիզմն ու նրա կարողությունները։

Այս շրջանն ընդգրկում է մոտավորապես 7—8 տարի, մինչնախադպրոցական (0—3) և նախադպրոցական (4—7) տարիները, այսինքն մի այնպիսի շրջան, յերբ յերեխան աճում է մեծ թափով, ճանաչում է շրջապատը, կազմակերպվում է ընազդներն ու սովո-

ությունները, բայց և մեծ չափով յենթակա յեն վտանգների, պատահարների, հիվանդությունների՝ իր օրգանիզմի փխրունության, դյուրախոցելիության և անկայունության շնորհիվ:

Ամեն մի մայր զգում է այս դժվարությունները, սակայն ինչքան էլ ձիգ ու ջանք թափի, մանավանդ գեղջկուհին ու բանվորուհին, թեկուզ իր քունը կորի, իր բերանից բաժին հանի յերեխային, էլի անկարող է անհրաժեշտ պայմանները ստեղծել: Յեվ այսպես տանջվում են տասնյակ ու հարյուրավոր մայրեր գյուղում՝ վաղ գարնանից մինչև խոր աշուն, քաղաքում (բանվորուհիները)՝ վողջ տարին, պարզ գիտակցելով, վոր մի ուրիշ կին, մի վարժուհի, մի ղեկավարուհի կը կարողանար տասնյակ մայրերի ազատել այս հոգսից և ավելի՛ն տալ ամեն մի յերեխայի՝ իր հասակակիցների շրջանում, խաղի ու հաճելի աշխատանքի պայմաններում:

Խնամքի ու հսկողության բացակայության պատճառով գյուղում և քաղաքի բանվորական թաղերում միշտ էլ յերեխաները կոտորվել են «ճանճերի նման». քչերին է հաջողվում դիմանալ բոլոր պատահականություններին ու զրկանքներին. մեկը այրվում է յեռացրած ջրում, կամ խեղդվում է թոնրում, մեկին գետն է տանում, մյուսը կառքի անիվների կամ ձիու վոտների տակ է ջարդվում. հինգերորդը թունավորվում է վորևէ բույսով կամ դեղով, վեցերորդին շունն է կծում, յոթներորդը կուրանում է, վոտը կամ ձեռքը կոտրում, հաշմանդամ դառնում. շատ-շատերը թեպետ ապրում են, բայց կորցնում են իրենց աշխուժությունը, դադարում են աճելուց, վարակվում են այս կամ այն հիվանդությամբ, դառնում են սակավարյուն, վատ, ծուռ վողնաշարով կամ անկանոն կրծքով, հետամնաց, թուլամիտ և այլն և այլն:

Ի՞նչն է ավելի հեշտ քան հավաքել այդ յերեխաներին, 10-ը, 20-ը, 30-ը մի խմբում հանձնել մի դաստիարակչուհու, մի ղեկավարի, վերջապես մայրերից մեկին, վորը հերթով հսկի իր և իր հարևանների, համագյուղացիների յերեխաներին: Մյուս մայրերը, վոր այդ օրերը ազատվում են յերեխաների հոգսից, ե՛լ ավելի յեռանդով ու հանգիստ սրտով կաշխատեն, նրանց աշխատանքն ավելի՛ արդյունավետ կը դառնա, վերջապես հնար կունենան ազատ շնչելու, մարդամեջ մտնելու, պատգամավորական ժողովներ, հանդեսներ, դպրոց ու դասընթացքներ կը հաճախեն, կապրեն հասարակական կյանքով, կասեն, կը խոսեն, կը լսեն ու «աշխարհի խերն ու շառից» տեղյակ կը լինեն, Յեվ մի՞թե այդ մայրն էլ ավելի չի հաճախի իր յերեխայով, էլ ավելի կարոտով չի սպասի նրա հանդիպման, յերբ այլևս յերեխան կպած չի լինի նրա կրծքին կամ կախ չի ընկնի նրա փեշերից, «ցավ ու պատիժ», «մի բուռն կրակ չի դառնա իր մոր ջանին»:

Իսկ ի՞նչ է ստանում ինքը յերեխան այս խմբերում, մսուրներում. մանկական հրապարակում, օջախում. մանկապարտեզում կամ մանկատանը:

Նախ քան այս հարցին պատասխանելը պետք է ասել, վոր մենք այժմ հերթական խնդիր ենք համարում մանկական հրապարակները գյուղում կամ քաղաքի հովասուն ու ընդարձակ հրապարակներում, գլխավորապես գարնան ու ամռան շրջանում, յերբ մի կողմից գեղջկուհու ծանր աշխատանքը, մյուս կողմից բնության բարիքները—օդը, ջուրն ու արևը անհրաժեշտ են դարձնում համախմբել յերեխաներին մի հարմար տեղ, ուր նրանք կարողանան միասին ապրել, միասին մտածել և անհրաժեշտ ունակություններն ու կարողությունները ձեռք բերել:

Նախադպրոցական գործը դեռ նոր է, թույլ է, մեր միջոցները շատ սուղ են, ուստի և այժմ մենք սկսելու յենք կարճատև հիմնարկներից, հրապարակներից, վորոնք դառնալու յեն հետագա մանկապարտեզների և օջախների բջիջները. այս բանում մենք համոզված ենք, վորովհետև այն մայրը, վորը մի ամառ ազատվում է իր յերեխայի հոգսից և տեսնում է նրան «շենք ու շնորքի յեկած» այլևս ձեռք չի քաշիլ դրանից ու ինքն ընդառաջ կը գնա հրապարակը շարունակելու հարցին. վերջ ի վերջո սա ձեռնտու յե հենց նյութական տեսակետից. ղեկավարի հսկողության տակ յերեխան ավելի կանոնավոր է ուտում, ավելորդ կերակուր ու իրեր չի փչացնում, մինչդեռ տանը «հացը միշտ անպակաս է լինում նրա բերանից», մանավանդ գյուղում: Շորերն ավելի մաքուր ու նոր են մնում, նա խուսափում է բազմաթիվ հիվանդություններից, ազատելով նաև ծնողներին հոգսերից ու ծախսերից:

Այսպես ուրեմն առաջին՝ յերեխան ազատ կը մնա զանազան դժբախտություններից, փորձանքներից, վորոնք վտանգում են նրա կյանքն ու առողջությունը. սա մի մեծ բարեբախտություն է թե իրենց յերեխաների, թե ծնողների և թե մեր հասարակության համար, վորը հետագայում կունենա ֆիզիքապես առողջ ու դաստիարակված սերունդ:

Յերկրորդ՝ հրապարակն ամեն մի հարմարություն կը տա յերեխային, օգտվել արևից, մաքուր օդից, ջրից, կամրանա նրա օրգանիզմը և մի ամառվա ամրացումը հնարավորություն կը տա յե-

րեխային դիմանալ ձմրան զրկանքներին, օդի ու լույսի պակասին. ցրտին:

Հրապարակում յերեխան կապրի իրեն համար կյանքով. կը խաղա՝ ինչքան պետք է նրան, ինչքան պահանջում է նրա աճող մարմինը. նա կազատվի ուժից վեր աշխատանքներից, ձանձրույթից, անգործությունից ու մեծերի՝ շատ անգամ անտեղի ու անվայել արարքները դիտելուց:

Յեվ վերջապես այստեղ յերեխան ձեռք կը բերի վորոշ ունակություններ ու գիտելիքներ, վոր նրան պետք են կյանքում: Նա կը սովորի հագնվել, լվացվել, հոգալ իր կարիքներն ու ազատել ուրիշին իր շատ հոգսերից. կը սովորի արտահայտել իր մտքերը, լսել ու հասկանալ ուրիշին, ճանաչել բնության յերևույթները, հաշվել, ծանոթանալ առարկաների հատկության հետ և այլն: Յեվ, վոր գլխավորն է՝ յերեխան կը սովորի ապրել հասարակական (մանկական) կյանքով, ճանաչել իր կոլեկտիվի շահերը, ապրել ընդհանուր ապրումներ, իրենց ընդհանուր գործը կանոնավորել: Այս դիտողությունների ու փոխհարաբերությունների ընթացքում նա ճիշտ գաղափար կստանա մարդու և նրա աշխատանքի, իրերի ու յերևույթների մասին: Մանկական հասակում ստացած տպավորությունը շատ անգամ ուժեղ հետքեր է թողնում ամբողջ կյանքում, ու քանի ճիշտ լինեն այդ տպավորությունները, այնքան կը հեշտանա յերեխայի առողջ ու նորմալ զարգացումը:

ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԻ ԱՆՑՆԵԼ

Այս հարցին պատասխանելիս մենք ի նկատի յենք առնում մեր կարողությունները, միջոցներն ու պայմանները, ով ավելին կը տա—գործն ավելի կը շահվի, ուր հնարավոր չէ մեր սահմանափակ պահանջները բավարարել—թող ավելի կրճատվեն նրանք. Եյականն այն է, վոր մենք կարողանանք հավաքել յերեխաների մի խումբ՝ մեծերի (ղեկավարի) հսկողության տակ, ազատենք նրանց պատահականությունից, իսկ ծնողներին՝ հոգսերից:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՏԵՂԸ.—Պետք է ընտրել բաց, ընդարձակ տեղ, գյուղի կամ քաղաքի ծայրում, աղքատ բնակչության և բանվորական թաղամասերին մոտիկ, ցանկալի յե՝ ուր հեռու լինի փողոցներից, շուկայի աղմուկից, առողջության համար վտանգավոր վայրերից (հիվանդանոց, աղբակույտներ, ճահիճ և այլն): Տեղը

լինելու յե բարձրադիր, առատ արևով ու օդով, ջրային տարածությունների մոտ տափարակ տեղերը կարող են մալարիայի վտանգ ստանալ: Լավ կը լինի հրապարակի մեջտեղում կամ շուրջը ծառեր լինեն շոգ ժամանակ պատսպարվելու, ստվերում հանգստանալու համար: Անհրաժեշտ չէ, վոր ամբողջ հրապարակը հարթ լինի, ընդհակառակը յերեխաները սիրում են բարձրանալ ու վազել բլրակներից, ցատկել փոսերի ու առվակների վրայից, իհարկե վորոշ տարածություն պիտի հարթ լինի խաղերի համար: Կան հրապարակներ ավազով ծածկված, կան՝ կանաչով. ցանկալի յե և այս և այն. յեթե տարածությունն ընդարձակ է, կարելի յե մի մասը ավազով ծածկել, մյուս կեսում հատուկ բույսեր ցանել (սագախոտ, սիրեղ) կամ մեջտեղը ավազածածկ շրջան, շուրջը՝ կանաչ. լավ կը լինի հրապարակի շուրջն ունենալ ընդարձակ (մոտ 2—3 մետր) լայնությամբ ճանապարհ, վազելու և զանազան խաղերի համար (ձի-ձի, թոկ և այլն):

ՇԵՆՔ.—Հրապարակի նպատակն է դուրս հանել յերեխաներին սենյակներից, գոմերից, նեղ բակերից, առատ լույս և օդ տալ նրանց, սակայն վատ յեղանակներին պատսպարվելու, յերբեմն և պարապելու, ինչպես նաև գույքը պահելու համար անհրաժեշտ է ունենալ գոնե 1—2 սենյակ. թող դա լինի մի հասարակ, մաքուր խրճիթ, դպրոցի դասարաններից մեկը, մի ընդարձակ պատշգամբ (ծածկված), միայն թե մոտ լինի հրապարակին: Յեթե հնար կա—կարելի յե հրապարակին մոտ տախտակե մի տնակ շինել ժամանակավորապես:

ԳՈՒՅՔ.—Անհրաժեշտ է վորոշ գույք հրապարակի համար, ամենից առաջ աթոռներ կամ նստարաններ (իհարկե, յերբեմն կարելի յե նստել նաև ավազի, կանաչի կամ քարերի վրա), վոր մեծ մասամբ պետք է գալիս նախաճաշելիս, ծեփելիս, նկարելիս և այլն: Գուցե անհրաժեշտ լինի մի պահարան կամ դարակներ, լվացարան, բաժակներ, ամանեղեն, ջրի տակառ և այլն: Յեթե յերեխաները (մանավանդ փոքրերը) յերկար են մնում հրապարակում, անհրաժեշտ են նաև թախտեր կամ փռվածք (կարպետ, խսիր, թաղիք): Անհրաժեշտ է ունենալ մանկական գործիքներ (մուրճ, բահ, ջրցիր և այլն) և խաղալիքներ:

ՆՅՈՒԹ.—Ավազը մեծ հետաքրքրություն է ներկայացնում յերեխաների, մանավանդ փոքրերի համար, սա եժան ու մատչելի նյութերից մեկն է, հարկավոր է միայն ընտրել բարակ ու մաքուր ավազ, սկզբում մաղել, հետագայում մեկ-մեկ մաքրել և

յերբեմն լվանալ, շղ որերին հրապարակի ավազոտ մասը ջրելիս, ջրել նաև ավազը, վոր քիչ խոնավ լինի, փոշի չանի և հեշտ ձեռակերպվի յերեխաների ձեռքերում: Մաքուր պահելու և չցրվելու համար ավազը լցնում են կես մետր բարձրության տախտակի շրջանակի մեջ, վորի շուրջը կանգնած աշխատում են յերեխաները:

Կավը նույնպես պիտի մաքուր ու փափուկ լինի. գործածելուց առաջ կավը շաղախում են և պատրաստ դրությամբ տրամադրում յերեխաներին:

Այնուհետև անհրաժեշտ է ունենալ գունավոր և սև մատիտներ, ներկեր, թուղթ (սպիտակ և գունավոր), սոսինձ, վրձիններ, թել, թոկ և այլն: Իհարկե սուղ միջոցների դեպքում կարելի յե նկարել սրած ածուխով, հատարակ (փաթաթելու) թղթի վրա: Խաղալիքների մեծ մասը կարելի յե շինել յերեխաների հետ, վորի համար գործադրվում է մեծ մասամբ անպետք նյութ (կտորեղեն, թել, տուփեր, խցան, փայտի կտորներ, ձողեր, կարտոն, յերկաթալար, ապակի և այլն):

Ի՞ՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ.—Ամենից առաջ պետք է ցուցակագրել 3—8 *) տարեկան՝ մեծ մասամբ չքավոր ընտանիքների (չքավոր գյուղացի, բատրակ, ուսուցիչ, կարմիր բանակային և այլն) յերեխաներին և վորբերին: Յերեխաների քանակը պետք է վորոշել՝ նայած հրապարակի մեծության և դեկավարների թվին: Ամեն մի դեկավարի կարելի յե տալ վոչ ավելի 30—40 յերեխաներից, խմբերը կազմելով ըստ տարիքի (3—4, 5—6, 7—8, կամ 3—5, 6—8): Նախ քան ընդունելությունը յերեխաներին պետք է յենթարկել բժշկական քննության, հեռացնելով մյուսների համար վտանգավոր հիվանդություն ունեցողներին (քոս, տրախոմա և այլն) և բոլորովին հյուծված կամ թուլամիտ յերեխաներին, վորոնք չեն կարողանալ խմբի հետ աշխատել: Նախ քան ընդունելությունը հարկավոր է լրացնել վորոշ անկետաներ յերեխայի տարիքի, ծնողների զբաղմունքի և այլ հարցերի մասին:

Մի քանի խմբեր աշխատելիս (նույն հրապարակում) պետք է յուրաքանչյուրին վորոշ տեղ հատկացնել, ըստ հարկի փոխելով տեղերը խմբերի մեջ:

Պարապմունքները հրապարակում տևում են ամբողջ որը, դոնե քանի դրազված են յերեխաների ծնողները, գյուղում այս հաշ-

*) Մենք առայժմ կանգ ենք առնում միայն այս տիպի հրապարակների վրա:

վոր յերբեմն 10—12 ժամ. իհարկե դժվար կը լինի դեկավարներին աշխատել այսքան յերկար: Անհրաժեշտ է ողնության կանչել մայրերից, քույրերից ԿՅԵՄ և Պիոներական կազմակերպության անդամներից, վորոնք հաճախ իրրև հերթապահներ կարող են փոխարինել դեկավարին՝ նրա դեկավարությամբ և հանձնարարությամբ համապատասխան աշխատանքներ. տանելով—գրույց, գրոսանք, խաղեր, յերբեմն և հսկում են յերեխաների հանգիստը կամ անձնական հոգսերը (լվացվել, սրբվել և այլն):

Անհրաժեշտ է, իհարկե, վոր յուրաքանչյուր հրապարակ ունենա գոնե մեկ հմուտ և մասնագետ (նախադպրոցական) դեկավար յեթե խմբերը մի քանիսն են, անհրաժեշտ է այդպիսի մեկն ունենալ իրրև վարիչ, առանց խմբի՝ անմիջական աշխատանքներից (յերեխաների հետ) ազատելով նրան: Հնարավոր դեպքում պետք է առաջ քաշել գյուղյերիտասարդության ակտիվ տարրերին և ոգտագործել հրապարակում իրրև պրակտիկանտներ—ոգնականներ. բժշկի մշտական աշխատակցությունը նույնպես ցանկալի յե, թե պարբերական քննությունների, և թե ռեժիմի ստուգման ու կիրառմանը հետևելու գործի համար: Անշուշտ վորոշ մասնակցություն կունենա նաև ուսուցիչն ու ուսուցչուհին, մանավանդ յեթե հրապարակն ոգտվում է դպրոցի շենքից ու դուրսից: Այս բոլոր աշխատակիցները հրապարակի դեկավարների (և վարիչի՝ յեթե կա) հետ միասին կազմում են հրապարակի խորհուրդը, վորը ծրագրում ու կազմակերպում է աշխատանքը, հաշվի յե առնում այն և դեկավարում է ընթացիկ կյանքը: Տեխնիկական աշխատակցի առանձին անհրաժեշտություն չի զգացվի, մանավանդ յեթե հրապարակում չկա ընդհանուր կազմակերպված նախաճաշ: Հերթապահ ծնողները, յերեխաների մեծ քույրերն ու մայրերը կարող են զգալի աջակցություն ցույց տալ այս բանում, վորոշ դեպքերում յերեխաներն են կատարում այս կամ այն աշխատանքը, մանավանդ յեթե յերեխաների ինքնակազմակերպման գործը հաջող է դրված:

Յեթե յերեխաները հրապարակում մնում են առնվազը 4—5 ժամ (իսկ գյուղերում մենք գիտենք, վոր ծնողներն զբաղված են լինում շատ հաճախ մինչև 10—12 ժամ որական), անհրաժեշտ կը լինի հրապարակում կերակրել նրանց որեկան 1—2, նույնիսկ 3 անգամ: Ի՞նչպես պետք է կազմակերպել սնունդը և ո՞վ և հոգալու այս ծախսերը: Յենթադրենք, վոր յերեխաները հավաքվում են ամառը ժամը 7-ից և մնում են մինչև 4-ը, այսինքն 9 ժամ: Ընդունենք, վոր նրանք հրապարակ են գալիս արդեն նախաճաշած, իսկ

տուն գնալիս անմիջապես ճաշում են ծնողների հետ: Համենայն դեպս յեթե վոչ յերկու, գոնե մի անգամ պետք է նրանց կերակրել Հրապարակում, մոտավորապես ժամը 12-ին: Գյուղում այնքան էլ դժվար չե սնունդի վորակը կանոնավորել, ի նկատի ունենալով, վոր առատ են վորոշ մթերքներ՝ կաթը, կարագը, ձուն, բանջարեղենը և այլն: Հացն ու պանիրը՝ միևնույն է՝ նրանք բերելու յեն տանից. յեթե նույնիսկ բացակայում է կողմնակի վարեն յեկամուտ: Պետք է աշխատել հենց ծնողների միջոցով կազմակերպել Հրապարակի մթերավորումը կանոնավորել մթերքների հայթհայթումը և մըտցնել ընդհանուր նախաճաշ, վորը դաստիարակչական մեծ նշանակություն ունի թե կոլեկտիվի կազմակերպման և թե առողջապահության տեսակետներից:

Թույլ տա՞լ «կողմնակի» յերեխաներին հաճախել Հրապարակ. մենք այս բանին առայժմս դեմ ենք, ի նկատի ունենալով, մեր մանկավարժական ուժերի, միջոցների ու հարմարությունների բացակայությունը: Հասակների տարբերությունը և յերեխաների կազմի հոսուն դրությունը բարդացնում է ղեկավարների աշխատանքը: Այլ բան է յերբեմն բաց պարապմունքներ (խաղեր, զրույց, գրոսանք և այլն) կազմակերպել, յերբեմն ակմբային բնույթ տալ պարապմունքներին, յերբեմն տոներն ու արտակարգ դեպքերը առիթ դարձնել՝ Հրապարակի շուրջը գյուղի պատանեկության խըմբելու համար:

Հասակների կղզիացած դաստիարակությունն ինարկե մեզ համար իդեալ չի կարող լինել:

Այժմ անցնենք ամենակարևոր խնդրին՝ աշխատանքի բովանդակության:

Հրապարակում տարվող մանկավարժական աշխատանքների հիմքը կազմելու յեն՝

ա) Յերեխաների ֆիզիքական դաստիարակությունը:

բ) Բնության ուսումնասիրությունը:

գ) Յերեխաների ինքնակազմակերպությունը:

դ) Կապ արդիականության և շրջապատող կյանքի հետ:

Ի հարկե այս բոլորը չեն ժխտում, վոր անհրաժեշտ չափով ուշադրություն դարձվի գեղարվեստական դաստիարակության, խաղերին, եքսկուրսիա—գրոսանքներին, զրույցին, գուցե նաև գրագիտության, հաշվին և այլն: Սրանք յերեխայի գործունեյության տարրերն են, վոր կարելի յե համախմբել վերոհիշյալ չորս հիմնական կետերի շուրջը:

Այս հիմնական սկզբունքներից բխում են նաև աշխատանքի ձևերն ու մեթոդները: Բնության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս յերեխաներին ճանաչել շրջապատը (տեղագիտություն), զննել վորոշ իրեր (կենդանի, բույս) և յերևույթներ. սրան միացնելով նաև ֆիզիքական դաստիարակության պահանջները, մենք անհրաժեշտություն ենք տեսնում, վորոշ աշխատանքային պրոցեսներ կատարելու (հողի մշակելը բանջարանոցում, ծաղկոցում, Հրապարակի սարքավորումը, գույքի նորոգությունը, խաղալիքների շինելը, գործիքներ բանեցնելը և այլն):

Ինքնակազմակերպման միջոցով յերեխաները սովորում են կանոնավորել իրենց կյանքը, ծանոթանում են աշխատանքի բաշխման ու կազմակերպության հետ, ընտելանում են հասարակական պարտականությունների (հերթապահություն, հանձնաժողովներ, ընդհանուր ժողովներ) և այլն: Աշխատանքը և աշխատանքային դաստիարակությունը մեծ չափով կապված է ինքնակազմակերպման խնդիրների հետ: Յերեխան պիտի սովորի սպասավորել իրեն, իր ընկերներին, հոգալ իր կոլեկտիվի կարիքները, շահերը: Աշխատանքի միջոցով կազմակերպվում է յերեխայի բնավորությունը, կամքը, նախաձեռնության վոգին և hասարակականությունը:

Յերեխան մեծագույն չափով յենթակա յե շրջապատող կյանքի ազդեցություններին և իր գործունեյության մեջ արտահայտում է միջավայրում ստացած տպավորությունները: Կարո՞ղ է Հրապարակը կտրվել շրջապատից, քանի վոր իրենք յերեխաները բուռն հետաքրքրություն են ցույց տալիս դեպի այդ կյանքի վորոշ յերևույթներ ու մոմենտներ—պիոներ կազմակերպությունը, հասարակական—քաղաքական տոները, տեխնիկայի նվաճումները, դասակարգային շերտավորումը (ի հարկե կոնկրետ յերևույթները), կուլտուրական հիմնարկները (ակումբ, թատրոն, լիկկայան) և այլն: Ի հարկե այս բոլորը պետք է տալ յերեխաներին համապատասխան ձևով ու չափով, առանց հոգնեցնելու և մեծ մասամբ խաղի բնույթ տալով պարապմունքներին:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կարո՞ղ է Հրապարակը հաստատուն ծրագիր ունենալ. անշուշտ վոչ, քանի վոր շատ բազմազան են պարապմունքները և մեծ մասամբ անրոնագրային բնույթ են կրում. սակայն ընդհանուր առ-

ժամը աշխատանքի որն իր մեջ պարունակելու է պարտադիր և ա-զատ պարապմունքներ:

Որը կարելի չէ սկսել պարտադիր պարապմունքներով, քանի դեռ յերեխաները թարմ են, կանոնավոր պարապմունքները սկզբից ևեթ աշխատանքային տրամադրություն են մտցնում յերեխաների մեջ որոշ ընթացքում և այս դեպքում յերեխաները չեն ուշանում պարապմունքների սկզբին: Պարտադիր պարապմունքների շարքը մտնում են խաղերը, զրույցն ու պատմվածքը, նկարչությունը, ծեփվածքը, յերգը, աշխատանքը (ձեռքի), գրագիտությունը (յեթե կա): Այսպես մինչև նախաճաշ, վորից հետո յերեխաները հանգստանում են մոտ մի ժամ, քնում են՝ յեթե հարմարություններ կան, յեթե վոչ, հանգստանում են—ով ինչպես ուզում է: Այնուհետև սկսվում են ազատ զբաղմունքները—ազատ խաղեր, խմբակային զբաղմունքներ, գույքի ու խաղալիքների նորոգություն, հրապարակի հավաքելը, տոների նախապատրաստություն, զբաղմունք այգում, բանջարանոցում և այլն: Ի հարկե չպետք է շաբլոնացնել, կարելի յե հարկ յեղած դեպքում, որինակ՝ առավոտ նայել պատկերազարդ գրքույկները, կեսօրից հետո՝ պատմվածք: Որվա դեպքերը, յերեխաների տրամադրությունը պետք է հաշվի առնել:

Ո՞Վ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԻ ԱՅՍ ԲՈԼՈՐԸ

Անկասկած մի ղեկավարի ուժերից բարձր է այս բոլոր աշխատանքը կատարել. հենց գործի սկզբից և յեթ ղեկավարը պիտի հրապարակի շուրջը համախմբի խորհրդային հասարակական մարմիններին, ուսուցչին—ուսուցչուհուն, գյուղի յերիտասարդության ակտիվ տարրերին, պատգամավորական ժողովների, կին-բաժնի և պիոներական կազմակերպության աշխատակիցներին: Մեկը խորհուրդներ է տալիս ու իր հեղինակությամբ ամրացնում է նոր գործը (գյուղխորհուրդ կոմբջիջ), մյուսը նյութական միջոցներ է տալիս (փոխօգնկոմ, կոոպերացիա), շրջան իր գույքն ու շենքն է տրամադրում, ԿՅԵՄ, կին-բաժինը, պիոներները ոգնականներ են տալիս և այլն, և այլն: Իսկ այս բոլորը միասին՝ լայն ագիտացիա ու պրոպագանդա յեն մղում և սկսելով քչից, հետզհետե ամրացնում են գործը, որեվոր նոր հարմարություններ առեղծում, մինչև վոր հաջողվի նույն աշնանը կամ արդեն մյուս տարվանից հիմք դնել իսկական մանկապարտեզի:

Չպետք է աչքաթող անել և ծնողներին. ոգտագործել նրանց ուժերն ու միջոցները, մանկավարժական աշխատանք տանել նաև ընտանիքում, մասնակցել լիկկայանում, խրճիթ-ընթերցարանում, կոոպերատիվում:

Չե, վոր վերջ ի վերջո ամեն մի նախադպրոցական նաև հասարակական աշխատավոր է:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

№ 1. ՀԱՐՑԱԹԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ

.... ի ամառ. հրապ. 192 թ. .... №

Հ Ա Ր Ց	Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն
1. Ազգանուն, անուն, (հայրանուն)	
2. Տարիքը (տարի, ամիս)	
3. Ծննդավայրը	
4. Հասցեն	
5. Բնակարանային պայմանները	
6. Ընտանիքի կազմը, յուրաքանչյուրի տարիքը	
7. Ընտանիքի անդամների զբաղմունքը	
8. Յերեխայի առողջապահությունը մինչև հրապարակ մտնելը և կրած հիվանդությունները	
9. Առողջ. ընդհանուր վիճակն այժմ	
10. Բնավորության առանձնահատկությունները (ընդգծել)	Զգայնություն, գրգռվածություն, նստակյաց, կենտրոնացած, առույգ, ուրախ, դաժան, համարձակ, վախկոտ, սիրալիր, ճշտապահ, մաքրասեր . . .
11. Հաճախ է լվացվում, լողանում	
12. Քնելու և արթնանալու ժամերը, (քանի՞ ժամ է քնում օրական)	
13. Շուտ է քուն մտնում, հանգիստ է քնում	
14. Ի՞նչ է ուտում, ի՞նչ կերակուր է սիրում	
15. Ի՞նչ աշխատանքներ է կատարում տանը	
16. Ինչպես է անցկացնում ազատ ժամանակը	
Ղեկավար՝	Տեղեկություններ հաղորդողի ազգանունը կամ ստորագրությունը
Բժիշկ՝	
(Տարի, ամիս, ամսաթիվ)	

№ 2. ՂԵԿԱՎԱՐԻ ՕՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

.... խումբ. .... ամիս, ամսաթիվ

1. Յեղանակը (օրվա) ....
2. Քանի՞ .... տղա, քանի՞ .... աղջիկ, ընդամենը .... հոգի։
3. Քանի՞ ժամ տևեց պարապմունքը .... (ժամ), ընդմիջումը ....
4. Ի՞նչ պարապմունքներ են ունեցել ....
5. Ղեկավարի դիտողությունը յերեխաների զբաղմունքի, խաղերի, վարքի և հրապարակի (խմբի) ընդհանուր կյանքի մասին։

....

....

(Ղեկավարի ստորագրությունը) ....

№ 3. ՀՐԱՊԱՐԱԿԻ (ԽՄԲԻ) ՇԱԲԱԹԱԿԱՆ ԿԱՄ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամիս .... ամսաթիվ .... 192 թ.

.... խմբի հաշվով. Յերեխաների տարիքը .... մինչև .... տարեկան

	Ամսաթիվ կամ օրեր	Յերեխաների միջին թիվը			Յեղանակը	Դիտողություններ	
		Տղա	Աղջիկ	Ընդամենը		Հաճախումների փոփոխման մասին	Ինչի՞ կարիք է զգացվել. Նկատելի բացեր
1	ԲՇ.						
2	ԳՇ.						
3	ԴՇ.						
4	ԵՇ.						
5	ՈՒՐԲ.						
6	ՇԲ.						
7							
	Ընդամենը (շաբաթ., ամս.)						
	Միջին թիվը օրական						

Ծանոթութ. — Զբոսանքների ժամանակ նկատված հաճախողների թվի փոփոխությունը հաշվի չառնել կամ [illegible] նշել։

Ղ ե կ ա վ ա ր՝

№4. ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՄԻ ԽՄԲԻ (30—40 ՀՈԳԻ) ԿԱՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՏԵՂԸ. (*այգի, պուրակ, ամերախիտ հրապարակ*).

2. ՇԵՆՔԸ. (1–2 *սենյակ, ծածկ կամ ընդարձակ պատշգամբ-պատշգամբ-արտաքնոց, խոհանոց*). *)

3. ԿԱՀԿԱՐԱՍԻ. *Սեղաններ, աթոռներ կամ նստարաններ, պահարան կամ դարակներ, յերաժշտության գործիքներ (յեթե կան)*:

4. ԱՄԱՆԵՂԵՆ. *Ջրի տակառ և անձևական պնակներ, բաժակներ**), *ինքնայեռ**), *ափսեներ**), *դույլ լվացարան, գդալներ**), *սրբիչներ, թասեր, խոզանակ կամ ավելներ, շնչոցներ, թռկեր*:

5. ԳՈՐԾԻՔՆԵՐ. *Մուրճեր, մկրատներ, բահեր, փոցխեր, ջրցիրներ, սղոց*:

6. ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ. *Կավ, ավազ, տախտակ, ձողեր, վրձիններ, ավազի արկղ, մատիտներ, ներկեր, պնակներ (ներկերի), սայլակներ, ձեռնասայլ (պատգարակ), սերմեր, մեխ, թել, ասեղ, կարկատան, անդեռք նյութեր*:

7. ԽԱՂԱԼԻՔՆԵՐ. *Փայտե ձի (ձողեր), ասնձ, ավազի համար ձևեր և բահեր, օղակներ, գնդակներ, զանգակներ, թմբուկ, կենդանիներ, կառքեր, մեքենաներ, կառուցողական նյութ, տիկնիկներ (բանվորուհի, գեղջկուհի, պիոներ և այլն), ճլորթի, ցանցեր և այլն*:

8. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ**).—*Հայերեն և ռուսերեն պատմվածքներ, պատկերազարդ գրքույկներ*:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.—***) 1. СУРОВЦОВА — Что такое детская площадка . . . . 8 к.
2. ВИЛЕНСКАЯ. (ред.)—Дошкольная работа в деревне 1925 г. . . . . , ... 50 к.
3. ГЛАГОЛЕВА.— Площадки.. Ленинград 1925 г. 80 к.
4. ЦЕРНОВА - ЕРМОЛЕНКО. — Как организовать площадку 1925 г. . . . . 20 к.
5: ЛЕТНЯЯ РАБОТА. ДОШКОЛЬНА сборн. Л-град 1923 г. . . 25 к.
6. *Համապատասխան հոդվածներ* „III-й дошкольн. с'езд" ... „Новые пути"... *և* „В помощь"... *ժողովածուներից*:

---

*) *Յեթե տաք նախաճաշ և արվում, կարելի յե վերցնել ծնողներից կամ յերեխաներն են բերում հետները*:
**) *Հատուկ գրականություն*:
***) *Ցուցակը արված և մանկապարտեզներին*:

1004
16128

№ 5 ԱՄԱՌԱՅԻՆ ՊՐԻՄԻՏԻՎ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

+ Ծառեր.

ծ. Ծանապարհներ.

ՃՀ. Ճաշի հրապարակ.

ՓՀ. Փոքր »

ՋԱ. Ջրի ավազան.

ՍՍ. Սենյակներ՝ յերեխաների և տեխնիկական աշխատավորի համար, խոհանոց, պատշգամբ:

ԱՎ. Ավազի արկղ.

Կ–Թ. Կենդանիների և թռչունների տեղ.

Ծ. Ծաղկանոց.

Բ. Բանջարանոց.

ՕՕ. Արտաքնոց.

Բլ. Բլրակ.

Ծանոթություն.—Տրված և մշտական հրապարակի հատակագիծը, նոր բացվող հրապարակը միայն կարող և նախատեսել այս պահանջները և մոտավոր կերպով դասավորվել, ձգտելով հնարավորի մոտենալ այս դրության: Տարածության չափերը առայժմս չենք տալիս:

№ 6 ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

40 յերեխա, 3 ամսվա ընթացքում

№ №	ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Քանակը	Արժեքը ըստ հատկությունների			ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
			Սովորական	Պրիմիտիվ	Ամենաանհրաժ. դուրքը	Փոփոխություններ. վորտեղից կարելի և ձեռք բերել
1	Սեղաններ 10 տեղանի .	4	32 ռ.	20 ռ.	20 ռ.	
2	Աթոռներ կամ . . .	40	60 [1])	20 [1])		
	Նստարաններ . .	5	20 [1])	15 [1])	15*	4 նստար., 8 տարուբ.
3	Պահարաններ	2	35	20	10*	1 հատ
4	Դարակներ	4	12	8	4*	2 հատ
5	Կախարան	2	10	5	—*	հասարակ մեխեր
6	Լվացարան և թաս . .	2	10	8	4*	1 հատ
7	Նյութերի արկղ . . .	1	3	2	—*	խնդրել մեկից
8	Տաբուրետ. մեծերի համար	2	2	2	—*	» »
9	Ջրի տակառ	1	10	5	5	
10	*) Ինքնայեռ կամ կուր	1	15	7	7*	Կուր
11	Դուլլեր	2	5	3	3	
12	*) Բաժակներ . . .	40	12	8	4*	Թիթեղից
13	*) Ափսեներ	20	6	4	2*	Միայն 10 հատ
14	*) Գդալներ	40	8	4	4*	Թեյի կամ ճաշի
15	Կավի արկղ . . .	1	2	1	1*	Խնդրել մեկից
16	Գոգնոցներ	40	20	12*	—	Ջրի կարել տալ
17	Սրբիչներ	10	5	5	—*	Բերել տներից
18	(Խոզանակ կամ) ավելներ	30	3	3	*	» »
	ՆՅՈՒԹԵՐ և ՊԻՏՈՅՔՆԵՐ					» »
19	Մկրատներ	4	2	Ինքներս ու Լամպադաշ ու Տեր	—*	
20	Մուրճեր	3	1 50		1 50	
21	Սղոցներ	2	3		3	
22	Վրձիններ	40	4		4	
23	Մեխեր	1 կիլո	2		2	
24	Ներկեր	40	2		2	
25	Թուղթ ոպիտակ (մեծ)	1/2 տա.	4		4	

[1]) Գումարներում չկան

Հ. Հ.	ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Քանակը	Արժեքը ըստ հատկություններ			ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
			Սովորական	Պրիմիտիվ	Անհրաժեշտ	Փոփոխություններ վոքտեղից կարելի է ձեիք բերել
			ՀԱՄԱՐՅԱ ԱՆՈՒՆՈՎ			
26	Թուղթ փաթաթելու	100 թ.	2		2	
27	Կարտոն	20	4		—	
28	Ջրցիրներ	5	5		2*	2 հատ
29	Փոցխեր	10	5		—	Ձեռք բերել ձրի
30	Սայլակներ	5	4		—	» » »
31	Կավ	1 փութ	—*		—*	Գտնել տեղում
32	Մատիտներ	7 դյուժ.	5		3*	4 դյուժին
33	Ավազ	1/2 խ. ս.	—*		—*	Ձեռք բերել տեղում
34	Գնդակներ	4	4		2*	2 հատ
35	Թմբուկներ	2	2		2	
36	Ավազի պիտ. (ձևեր)	2 կոմպ.	3		3	
			ՀԱՄԱՐՅԱ ՉԵՆ			
37	Սանձեր	4	—*		—*	չինել տեղում
38	Ողակներ	4	—*		—*	Ձեռք բեր. տեղում
39	Ձանգակներ	10	5		—	
40	Բահեր	10	—		—	Շինել տեղում
41	Սերմեր		—		—	Ձեռք բերել տեղում
42	Կառուցող. նյութեր		10		—	
43	Մանկական և մանկավարժական		10		10	
			267.50	157.50	119.50	

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼ

Յուրաքանչյուր դեկավարի ամսական 30 ռ., 3 ամսում 90 ռ.
Վարիչ - դեկավար » 40 » » » 120 »

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ

Ինչ ծախսեր / Հիմնարկների կատեգորիան	Կահավորություն	Նյութեր, պիտույքներ	Պերսոնալ	Գումար
Սովորական	190	77—50	210	477—50
Պրիմիտիվ	117	40—50	120	277—50
Անհրաժեշտ ծախսեր	79	40—50	90	209—50

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Մենդի ծախսը նախահաշվի մեջ չի մտնում, նախահաշ չլինելու դեպքում նախահաշվից հանել §§ 10, 12, 13, 14։

Մանր-մունր ծախսերը ի նկատի չեն առնվել (թել, ասեղ, սապոն և այլն).

Պերսոնալը հաշված է սովորական հրապարակում՝ 1 վարիչ և 1 դեկավար, պրիմիտիվ հրապարակում՝ 1 վարիչ-դեկավար. ծայրահեղ դեպքում միայն մի դեկավար։

Պատեհն

ԳԱՎԼՈՒՄԲԱԺԻՆՆԵՐԻՆ

Նախադպրոցական հիմնարկների ցանցի լայնացումը նպատակահարմար է սկսել ամառային հրապարակներից։

Հատկապես գյուղում, դաշտային աշխատանքների շրջանում զգալի է հրապարակների անհրաժեշտությունը, որը շափահասներն ամբողջովին իրենց գործով են զբաղված և երեխաները օրվա մեծ մասը անուշադրության և պատահականությունների են մատնված։

Մանկական հրապարակը մեծ ազնվություն ցույց կտա աշխատավոր գյուղացիության (ծնողներին), գոնե մասամբ ազատելով նրանց երեխաների հոգից և հնարավորություն տալով հասարակական կյանքով ապրելու, մյուս կողմից նրանց կմոտեցնի նախադպրոցական գործին և կը համոզի մշտական նախադպրոցական հիմնարկների անհրաժեշտության խնդրում։

Հաշվի առնելով տեղական բյուջեների ներկա վիճակը և այս ձեռնարկությունների համար հատուկ միջոցների բացակայությունը, Սոցապավարչությունս ամենայնիվ հնարավոր է համարում ներկայումս առաջադրել հրապարակների խնդիրը։

Դպրոցների և հատկապես գյուղերում գտնվող նախադպրոցական հիմնարկների փորձը ցույց է տալիս, որ այս հիմնարկների շուրջը ստեղծվել է փորոչ հասարակություն, որը շատ դեպքերում (տնտեսություն, կոոպերացիոն նախաձեռ և այլն) զգալի աջակցություն է ցույց տալիս կազմակերպչական նյութական հարցերում։

Ահա այս հասարակության ուժերն ու միջոցները պետք է ոգտագործել մանկական հրապարակներ ստեղծելու համար։

Այս գործում, կարծում ենք, Լուսաբաժինը հրապարակ կը բերի հարկավոր նախաձեռնությունը, գործի հաջողության համար ի նկատի ունենալով հետևյալ հանգամանքներն ու միջոցները։

1. Ոգտագործել տեղական բյուջեի հրապարակներին հատկացրած գումարները, ուր չկա այդ՝ հարց մացնել հատուկ միջոցներ ստեղծելու։

2. Խորհրդակցության հրավիրել տեղերում խորհրդային-հասարակական-պրոֆեսիոնալ մարմիններն ու կազմակերպությունները, բաշխելով նրանց մեջ աշխատանքն ու պարտավորությունները։

3. Հանձնարարել ուսուցիչներին կամ վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներին յերեխաների ցուցակագրությունը (3—7 տարեկան) և մոտավոր նախահաշվի կազմելը (3—4 ամսվա համար)։

4. Ցրամադրել պատրաստի շենքերն ու հարմարությունները ապագա հրապարակի համար (գպրոց, ակումբ, խրճիթ-ընթերցարան, պուրակ, հոգամատ, ինվենտար և այլն)։

5. Հրավիրել կազմակերպչական մարմին (բյուրո) վերոհիշյալ հասարակությունների ներկայացուցիչներից։

6. Նշանակել մանկավարժական աշխատանքը տանող դեկավարներ, հրավիրելով նաև ազնվականներ ԼԿՅԵՄ-ից և պիոներ կազմակերպությունից։

7. Հրապարակի բացումից հետո բյուրոն լուծված համարել և կազմել հրապարակին կից գործող խորհուրդ։

8. Ընդհանուր կարգով դեկավարել հրապարակի կազմակերպչական-մանկավարժական-հասարակական աշխատանքը։

9. Զգալ ամեն կերպ առաջիկա ուս. տարվա սկզբին հրապարակը վերածել մանկապարտեզի (գոնե միայն առաջին խմբակը)։

Ծանոթություն.—Մանկավարժական պերսոնալի պակասության շնորհիվ հրապարակի կազմակերպչական աշխատանքին գործուղել քաղաքի մանկապարտեզների աշխատակիցներից։ Հարկ լինելու դեպքում առաջարկել նրանց տանել ամառվա աշխատանքը հրապարակում, ապահովելով նորմալ հանգիստը և համաձայնության գալով այս առթիվ Լուսաբաժնի կենտրոնական օրգանների հետ։

Սոցդասավարչությունս խնդրում է աշխատանքների կազմակերպության սկզբնական շրջաններում տեղեկացնել հետևյալ խնդիրների մասին.

ա) Վո՞ր վայրերում այս ամառ բացվում են հրապարակներ, ո՞ւմ միջոցներով, քանի՞ խումբ կամ յերեխաներ յուրաքանչյուր վայրում, ի՞նչ նախահաշվով և տեղեկությամբ:

բ) Ո՞ւմն և հանձնարարվում յուրաքանչյուր վայրում հրապարակի կազմակերպումը.

գ) Գավկենտրոնի աշխատակիցներից ո՞վքեր են գործուղվում կազմակերպելու և ո՞ւր, ի՞նչ ժամանակով և պայմաններով:

Հետագայում ընթացիկ աշխատանքների մասին զեկուցել ընդհանուր կարգով: Մանկական հրապարակների կազմակերպման ու աշխատանքի մասին տպագրվում է հատուկ ձեռնարկ, մամ որերս կուղարկվի վարչության և կենտրոնական կեն-բաժնի կողմից ի դեկավարություն:

ՍՈՅԴԱՍԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0223656

30.702